

# «ՀայԷԼԵԿՏՐՈՆԻԿ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ք .Երեվան

2025

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	<u>3</u>
Չամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	<u>5</u>
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	<u>6</u>
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	<u>8</u>
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	<u>9</u>

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

«Հայէլեկտրամբենա» ԲԲԸ

առ 31.12.2024թ

Հազար դրամ	Ծնթգ	Առ 31 դեկտեմբերի 2024թ	Առ 31 դեկտեմբերի 2023թ
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	103,340	36,058
Անավարտ և տեղակայման ենթակա ոչ ընթացիկ ակտիվներ	5	-	228,884
Յեռաձեռն գումար և այլ ակտիվներ	6	14,241	28,022
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>117,581</b>	<b>292,964</b>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	277,718	559,359
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	606,425	1,391,346
Տրված կարճաժամկետ փոխառություններ	9	1,290,052	3,412,163
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	35,810	88,997
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>2,210,005</b>	<b>5,451,865</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>2,327,586</b>	<b>5,744,829</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ		1,158,578	1,158,578
Կուտակված շահույթ		456,013	2,181,916
Պահուստներ		-	339,702
Էմիսիոն եկամուտ		-	1,346,845
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	11	<b>1,614,591</b>	<b>5,027,041</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		<b>-</b>	<b>-</b>
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	920	1,035
Ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով	13	14,299	713,244
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների հատուցումների գծով	14	3,067	3,509
Ընթացիկ պարտավորություններ բանեմասի գծով		694,709	

Ընդամենը ընթացիկ պարտավորություններ

712,995

717,788

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
/2 ար ու ն ա կ ու թ յ ու ն /

Ընդամենը սեփական կապիտալ և  
պարտավորություններ

2,327,586

5,744,829



Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ընկերության տնօրինության կողմից  
18.04.2025 թվականին

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող  
Ծանոթագրությունների հետ մեկտեղ, որոնք ներկայացված են 9-31 էջերում:

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

“ՀայԷլեկտրամեքենա” ԲԲԸ

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024թ.	2023թ.
<b>Շարունակվող գործառնություններ</b>		
Իրացումից հասույթ, այդ թվում	15 <b>3,876</b>	<b>49,342</b>
Պատրաստի արտադրանքի, ծառայությունների	2,000	1,000
Գործառնական այլ եկամուտներ	1,876	48,342
Գործառնական ծախսեր, այդ թվում	15 <b>(111,186)</b>	<b>(135,546)</b>
Վաճառված արտադրանքի, ծառայությունների	(1,818)	(909)
Գործառնական այլ ծախսեր	(109,368)	(134,637)
<b>Շարունակվող գործունեության այլ</b>	<b>10,962</b>	<b>54,029</b>
<b>Շարունակվող գործունեության այլ ծախսեր</b>	<b>(18,847)</b>	<b>(860)</b>
<b>Շահույթ (վնաս) նախքան հարկումը</b>	<b>(115,195)</b>	<b>(33,035)</b>
Ծահույթահարկի գծով ծախս (փոխատուցում)	(-)	(-)
<b>2024 թ շահույթ (վնաս)</b>	<b>(115,195)</b>	<b>(33,035)</b>
<b>Ընդհատվող այլ գործառնություններ</b>	16	
Հիմնական միջոցների իրացումից հասույթ	88,942	5,110,065
Պաշարների օտարումից եկամուտ	261,722	-
Օտարված հիմնական միջոցների արժեք	(161,602)	(1,008,708)
Օտարված պաշարների արժեքը	(281,642)	(-)
Փոխառությունների տրամադրումից տոկոսային	128,010	107,373
Ծահույթ (վնաս) նախքան հարկումը	<b>35,430</b>	<b>4,208,730</b>
Ծահույթահարկի գծով փոխատուցում (ծախս)	(18,903)	(709,587)
Հետաձգված հարկի գծով ծախս /եկամուտ/	(13,781)	(42,826)
<b>2024 թ շահույթ (վնաս)</b>	<b>2,746</b>	<b>3,499,143</b>
<b>Ընկերության ընդհանուր զուտ շահույթ (վնաս)</b>	<b>(112,449)</b>	<b>3,423,282</b>
Մեկ բաժնետոմսի ն բաժին ընկնող բազային	(6,9)	356,7
Մեկ բաժնետոմսի ն բաժին ընկնող նոսրացված	(9,7)	295,5

Գլխավոր Տնօրեն *Ս. Սարգսյան* Գլխավոր Խաշվապահ *Ա. Այդինյան*



Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող Ծանոթագրությունների հետ մեկտեղ, որոնք ներկայացված են 9-31 էջերում

**Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին**  
 “Հայէլեկտրամեքենա” ԲԲԸ

Հազար դրամ	Ծնթգ.	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
------------	-------	---	---

**Շարունակվող գործառնություններ**

**Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից**

Հաճախորդներից ստացված դրամական մուտքեր	-	21,798
Գործառնական գործունեությունից այլ դրամական միջոցների ներհոսքեր	7,481	-
Պաշարների ձեռք բերում	(-)	(-)
Վճարումներ ստացված ծառայությունների դիմաց	(12,975)	(21,316)
Վճարումներ աշխատակիցներին և աշխատակիցների անունից	(40,391)	(51,526)
Վճարումներ պետական բյուջե	(-)	(3,017)
Գործառնական գործունեությունից այլ դրամական միջոցների արտահոսքեր	(23,770)	(-)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	<i>(69,655)</i>	<i>(54,061)</i>

**Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից**

Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	42,996
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(-)	(-)
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	-	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	<i>=</i>	<i><u>42,996</u></i>

**Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից**

Ստացված վարկերից և փոխառությունից մուտքեր	-	4,800
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	(-)	(4,700)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	-	-
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	(-)	(-)
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</i>	<i>-</i>	<i>100</i>

**Ընդհատվող գործառնություններ**

**Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից**

Հաճախորդներից ստացված դրամական մուտքեր	318,979	-
Գործառնական գործունեությունից այլ դրամական	-	-



**Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**  
 “Հայէլեկտրամեքենա” ԲԲԸ

2023թ.

	կանոնադրա կան կապիտալ	Է մ ի ս ի ո ն ե կ ա մ ու տ	Կանոնադրա կան պահուստներ (աճ, /նվազում)	Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,158,578	1,346,845	339,702	(1,241,366)	<u>1,603,759</u>
կանոնադրական կապիտալի ավելացում / պակասեցում/					
Ջուտ եկամուտ (զուտ կորուստ)				3,423,282	3,423,282
Շահաբաժիններ Կանոնադրական պահուստներ					
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,158,578	1,346,845	339,702	2,181,916	<u>5,027,041</u>

2024թ.

	կանոնադրա կան կապիտալ	Է մ ի ս ի ո ն ե կ ա մ ու տ	Կանոնադրա կան պահուստներ (աճ, /նվազում)	Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1,158,578	1,346,845	339,702	2,181,916	<u>5,027,041</u>
կանոնադրական կապիտալի ավելացում / պակասեցում/					
Ջուտ եկամուտ (զուտ կորուստ)				(112,449)	(112,449)
Շահաբաժիններ				(3,300,000)	(3,300,000)
Այլ		(1,346,845)	(339,702)	1,686,546	1
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,158,578	-	-	456,013	<u>1,614,591</u>

Մեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ճանաչողությունների հետ մեկտեղ, որոնք ներկայացված են 9-31 էջերում:

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Ա/ Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ

Ընկերությունը իրենից ներկայացնում է որպես բաց բաժնետիրական ընկերություն:

«Հայելեկտրամեքենա» ԲԲԸ իրականացնում է հետևյալ գործառնությունները

- էլ. մեքենաների և տրանսֆորմատորների արտադրություն
- էլեկտրաշարժիչ և հսկիչ սարքերի և սարքավորումների արտադրություն
- Կենցաղային էլեկրասարքավորումների և անհատական պատվերների արտադրություն

2 «Հայելեկտրամեքենա» ԲԲԸ իրավաբանական անձ է և գործում է որպես Բաց բաժնետիրական ընկերություն: Ընկերության Պետական Ռեգիստրի գրանցման վկայականն է 012171, տրված է 23.05.1995 թվականին ՀՀ պետական ռեգիստրի կողմից, գրացման համարն է 269.120.00667: Ընկերությունը սկզբնապես գրանցված է եղել որպես Փակ Բաժնետիրական ընկերություն, այնուհետև 13.02.2001թ վերակազմավորվել է որպես Բաց Բաժնետիրական Ընկերության: Ընկերությունը հաշվառված է ՊԵԿ հաճախորդների սպասարկման վարչության 6-րդ բաժնում և հարկ վճարողի հաշվառման համարն է 02504354 : «Հայելեկտրամեքենա» ԲԲԸ-ն գործում է Երևան քաղաքի Մանանդյան 41 հասցեում: Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմում է 1,158,578 հազ. դրամ, բաժնետոմսերի քանակը կազմում է 11,585,780 հատ, մեկ բաժնետոմսի արժեքը 100 դրամ է: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի քանակը 4780 բաժնետեր է, որին պատկանում է ընկերության 100 տոկոս բաժնեմասը: Խոշոր բաժնետեր է համարվում Գ.Մաթևոսյանը, որին պատկանում է 8,710,039 հատ բաժնետոմս կամ ընդհանուր բաժնետոմսերի 75.18 տոկոսը: Երեք բաժնետերերի պատկանում է 301,208 բաժնետոմս կամ 2.6 տոկոսը: Մյուս 4776 բաժնետերերին պատկանում է 22.22 տոկոսը կամ 2,574,533 հատ բաժնետոմս:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 48 մարդ /2023թ-53 մարդ/:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում մ իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

### 2. Հաշվետվողականության պատրաստման հիմունքներ

#### Ա/ Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերությունը հայտարարում է, որ 2024 թ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՖՀ Միջազգային ստանդարտներին համապատասխան:

- Բացահայտում 1

Համաձայն Ընկերության 20.06.2023 թ բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրության որոշումների Ընկերությունը որոշել է դադարեցնել ոչ շահույթաբեր գործունեության որոշակի տեսակներ և հաշվետու տարվա ընթացքում իրացրել է հիմնական միջոցների կազմում առկա անշարժ գույքի զգալի մասը, ինչպես նաև ապագայում իրացնել նաև դադարեցվող գործունեության պաշարները, խուսափելով հիմնական միջոցների

արժեզրկումից: Սահմանվել է վերակազմավորման, վերապրոֆիլավորման, գործունեության որոշ տեսակների դադարացման ժամանակազրկման և աշխատանքային պլան, որը պետք է ավարտվի 31.12.2024թ.: 25.05.2024թ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նախատեսվել է շարունակել ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների իրացումը նաև 2024թ ընթացքում և շարունակել 20.06.2023թ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված գործընթացը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով, սակայն պարունակում են նաև ընդհատվող գործունեությանը վերաբերող տեղեկատվություն և բացահայտումներ: Այնուհանդերձ ընկերությունը ունի բավարար դրամական հոսքեր կրեդիտորական և այլ պարտքերի մարման համար: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընկերությունը ներկայումս չունի և տեսանելի ապագայում չի ունենա իրացվելիության, անվճարունակության խնդիրներ:

**(բ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կտրացված են մոտ հազարերորդականով, եթե այլ բան նշված չէ: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 396. 56 և 404.79 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար:

**(գ) Չափման հիմունքներ**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների:

**(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում**

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվետու ժամանակաշրջանի դրույթամբ ակտիվների պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի համար եկամուտների ու ծախսերի մեծության վրա:

Ընկերությունը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ենթադրություններ և գնահատականների վերաբերյալ անորոշությունները կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ: Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ ցուցանիշների վրա ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և

պարտավորութիւնները հաշվեկշռային արժեքները կենթարկվեն Էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայութեան ժամկետ*

Հիմնական միջոցների օգտակար ծառայութեան ժամկետի գնահատումը դատողութեամբ արդյունքէ՝ հիմնված նմանակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը գույքնթաց: Այնուամենայնիվ նման գործոնները, ինչպիսիք են գործառնական կամ տեխնիկական մաշվածութիւնները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարութիւնը ակտիվի մնացորդային օգտակար ծառայութեան ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան:

Ընկերութեան ղեկավարութիւնը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարութեան ժամկետները Էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերութեան ֆինանսական հաշվետվութիւնները Էականորեն կտարբերվեն:

*Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերութիւնը գնահատում է ակտիվների փոխատու ցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխատու ցվող արժեքը: Եթե պայմանները փոփոխվում են և ղեկավարութիւնը որոշում է, որ ակտիվների արժեքը ավելացել է, ապա արժեզրկման պահուստը ամբողջութեամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ղեկավարական պարտքի համար արժեզրկման պահուստը հիմնված է յուրաքանչյուր հաճախորդի հաշվի հավաքագրելիութեան գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակութեան նվազում կամ, եթե իրական ժամկետանց գումարները ավելի շատ են, քան կանխատեսումները, իրական դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

Եթե ղեկավարութիւնը որոշում է, որ անհատապէս գնահատվող դեբիտորական պարտքերի գծով, լինի դանշանակալի թե՛ ոչ, ոչ մի օբյեկտիվ հայտանիշ արժեզրկման համար չկա, այն ներառվում է դեբիտորական պարտքերում նման վարկային ռիսկի հայտանիշներ ունեցող դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է դրանց արժեզրկման խմբային գնահատում:

Խմբային արժեզրկման գնահատման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են միևնույն ռիսկի հայտանիշների հիման վրա: Այդ հայտանիշները վերաբերվում են խմբերի համար ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատմանը, որը ցույց է տալիս գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններին համապատասխան գումարների վճարումները կատարելու ուղղութեամբ դեբիտորի հնարավորութիւնը:

Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարութեան փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի վնասի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողութեան:

Ներկայումս գոյութիւն չունեցող անցյալ պայմանների ազդեցութիւնը վերացնելու և անցյալում գոյութիւն չունեցող, բայց ներկայումս առկա պայմաններ ազդեցութիւնը արտացոլելու նպատակով

անցյալ փորձը ճշտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

*Յարկային օրենսդրության*

Յայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է հաճախակի փոփոխվող օրենսդրության մեջ, որը հաճախ մեկնաբանության և ներքին պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Յարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Յարկային մարմիններն օրենքով իրազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Յայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան նահատումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

*Ֆինանսական գործիքի իրական արժեք*

Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններում հաշվառվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը դուրս չի բերվում ակտիվ շուկայից, նրանց իրական արժեքը որոշվում է գնահատման մեթոդների օգնությամբ՝ ներառյալ դրամական հոսքերի գեղջման մոդելը: Սուտքային ցուցանիշները այս մոդելներում վերցվում են դիտարկելի շուկաներից, որտեղ դա հնարավոր է, իսկ որտեղ հնարավոր չէ՝ դատողությունների որոշակի աստիճան է անհրաժեշտ իրական արժեքները գնահատելու համար: Դատողությունները վերաբերում են այնպիսի մուտքային տվյալներին, ինչպիսիք են իրացվելիության ռիսկը, վարկային ռիսկը և փոփոխականությունը: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդել ֆինանսական գործիքների հաշվառվող իրական արժեքի վրա:

**(ե) Իրական արժեքի չափում**

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի քաղաքականությունների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

**ը) Ստորագրումը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ընկերության ղեկավարության կողմից 18.04.2025 թվականին:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները կիրառվել են հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

**ա) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ**

Հասույթը ճանաչվում է այնպես, որ նկարագրի ապրանքների և ծառայությունների՝ հաճախորդներին փոխանցման ձևը: Ծանաչված գումարը պետք է արտացոլի Ընկերության կողմից ակնկալվող այն գումարը, որ կստանա այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դեպքում:

Որպեսզի բավարարվի հասույթի ճանաչման հիմնական սկզբունքը, Ընկերությունը կիրառում է հինգ բայերի մոդելը, մասնավորապես՝

- ▶ Որոշել հաճախորդի հետ կնքված պայմանագիրը:
- ▶ Որոշել պայմանագրով սահմանված կատարման ենթակա պարտականությունները: Կատարման ենթակա պարտականությունները պայմանագրով սահմանված խոստումներ են՝ հաճախորդին փոխանցելու հստակ սահմանված ապրանքներն ու ծառայությունները:
- ▶ Սահմանել գործարքի գինը: Գործարքի գինն իրենից ներկայացնում է այն գումարը, որը Ընկերությունն ակնկալում է ստանալ հաճախորդների խոստացված ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Եթե պայմանագրով խոստացված գումարը պարունակում է փոփոխական գումար, ապա Ընկերությունը պետք է գնահատի այն գումարը, որը վերջինս ակնկալում է հաճախորդներին խոստացված ապրանքներն ու ծառայությունները փոխանցելու դիմաց:
- ▶ Գործարքի գինը բաշխել յուրաքանչյուր կատարման ենթակա պարտականության վրա՝ հիմք ընդունելով պայմանագրով խոստացված յուրաքանչյուր հստակ սահմանված ապրանքի կամ ծառայության մասով առանձին վերցված վաճառքի գինը:
- ▶ Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ երբ հաճախորդը ձեռք է բերում այդ ապրանքի կամ ծառայության վերահսկողությունը): Կատարման ենթակա պարտականությունը կարող է բավարարվել ժամանակի կոնկրետ պահին (որպես կանոն հաճախորդին ապրանքների փոխանցման խոստումների դեպքում) կամ ժամանակի ընթացքում (որպես կանոն հաճախորդին ծառայությունների փոխանցման խոստումների համար): Ժամանակի ընթացքում բավարարված կատարման ենթակա պարտականության համար, Ընկերությունը ընտրում է առաջընթացի չափման համապատասխան միջոց սահմանելու համար, թե որքան հասույթ պետք է ճանաչվի, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է:

### *Ծառայություններ*

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համամասնորեն, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է:

Գործարքի ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության կամ ընդունման ակտերի հիման վրա:

### **(բ) Ֆինանսական եկամուտ**

Ընկերության ֆինանսական եկամուտը ներառում է ներդրված միջոցների և տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### **(գ) Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված

արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հողվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

## **(ե) Աշխատակիցների հատուցումներ**

### *Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ*

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի կողմից նախկինում մատուցված ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

## **(զ) Շահութահարկ**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարբերին:

### *i. Ընթացիկ հարկ*

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

### *ii. Հետաձգված հարկ*

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվառման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային հաշվառման նպատակով օգտագործվող

գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք

ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը զանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

## **(է) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք**

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը բնականոն գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

## **(ը) Այլ ծախսեր**

*Սոցիալական ծրագրերի գծով ծախսումներ*

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

## **(թ) Հիմնական միջոցներ**

### *i. Ծանաչում և չափում*

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Մեփական ուժեքով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջակա- նորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով »Այլ եկամուտ/Այլ ծախս« հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

*ii.* Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ դրա հետևանքով Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը կաճի, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

*iii.* Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է այն ամսաթվից, երբ դրանք տեղադրվում են և պատրաստ են շահագործման համար, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու ամսաթվից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

Շենք շինություններ	----- 60 տարի
Տեխնիկական մեքենաներ և սարքավորումներ	-----5 տարի
Տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	----- 8 տարի
Համակարգչային տեխնիկա	-----5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ժ) Ոչ նյութական ակտիվներ**

*i.* Ծանաչում և չափում

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

*ii.* Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում միայն այն պարագայում, եթե դրանք ավելացնում են Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը: Մնացած բոլոր ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

*iii.* Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակահատվածների համար հետևյալն են.

Ծրագիր

Արտոնագրեր և այլ ակտիվներ

10 տարի

3-ից 10 տարի

Ամորտիզացիայի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

#### **(հ) Բաժնետիրական կապիտալ**

##### *Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հաշվի առնելով հարկային հետևանքները:

#### **(լ) Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական գործիքը մի պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

#### **Ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու Ընկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում՝ Ընկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չէ:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումները» (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով:

Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը արտացոլում է Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարումը դրամական հոսքեր ձևավորելու նպատակով: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ միաժամանակ՝ երկուսից:

Ֆինանսական ակտիվների գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորություններով (կանոնավոր գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

#### Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում.

- ▶ Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով նախորոշված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (բաժնային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

*Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)*

Ընկերությանն առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Ընկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարված են ստորև թվարկված երկու պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, վերանայվում է կամ արժեզրկվում է:

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են բանկային հաշիվները և ավանդները, առևտրային դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)*

Ընկերությունը պարտքային գործիքները չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ

ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ բավարարված են ստորև թվարկված պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է ակտիվը պահել միաժամանակ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու և վաճառելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների տոկոսային եկամուտը, արտարժույթի փոխարժեքի վերագնահատումները և արժեզրկումից կորուստները կամ հակադարձումները ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում և հաշվարկվում են նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Իրական արժեքի մնացած փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ապաճանաչման ժամանակ, իրական արժեքի կուտակված փոփոխությունը, որը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը չունի իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը երբեմն կարող է ընտրել իր բաժնային ներդրումներից մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում» ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Ընկերությունը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային

գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված Իրական արժեքի պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

#### Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը հիմնականում ապաճանաչվում է (այսինքն՝ հանվում է Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ

- ▶ ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման փոխանցման համաձայնագրի համաձայն, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի վերահսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները:

Երբ Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանված իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

### ***Ֆինանսական պարտավորություններ***

#### ***i. Սկզբնական ճանաչում և չափում***

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերադրաֆտները:

#### ***Հետագա չափում***

Հետագա չափման նպատակով ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են երկու տեսակի.

- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- ▶ Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ (վարկեր և փոխառություններ):

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող որևէ ֆինանսական պարտավորություն:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխատուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, և համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում:

Ա ն տ ո կ ո ս կ ամ ց ա ժ ր տ ո կ ո ս ո վ ս տ ա ց վ ա ծ ց պ ա հ ա ն ջ վ ար կ եր ի ե փ ո խ ա ա ու թ յ ու ն ն եր ի իրական արժեք է համարվում վարկի կամ փոխառու թյան անվանական արժեքը, քանի որ դրանք ենթակա են մարման ցանկացած պահին՝ հնարավոր ու թյան առկայ ու թյան դեպքում, և կազմակերպու թյան դեկավար ու թյանը ակընկալ ու մ է մարել դրանք շատ կարճ ժամկետներում:

#### ***ii. Ֆինանսական գործիքների հաշվանցումը***

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու, միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

#### **(խ) Արժեզրկում**

*i.* Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր պարտքային գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով : Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Ընկերության կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ այլ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի

ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր

էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստները ձևավորվում են այն վարկային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների համար, անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների դեպքում, Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, այլ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին կորուստի պահուստը ճանաչում է՝ հիմք ընդունելով ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստները:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օր և ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք:

*ii.* Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները համամասնության հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկումից վնասների նվազեցման կամ վերացման հայտանիշներ բացահայտելու նպատակով: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

#### **(ծ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

#### **(կ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ**

Ընկերությունը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի մասին տեղեկատվություն իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հաշվարկելու նպատակով Ընկերությունը ճշգրտում է իր սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի միջին կշռված թիվը՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելով:

#### **(հ) Սեզմենտային հաշվետվություններ**

Գործառնական սեզմենտը Ընկերության այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության մեջ, որից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Խորհրդի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեությունը գնահատելու նպատակով: Դեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

### **Ճ/ Յաջվետու Ժամանակաշրջանից հետ տեղի ունեցող դեպքեր**

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

#### դ/ Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ  
ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի ԼԼ \$ՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորությունն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքների դեպքում (\$ՀՄՍ 16-ի փոփոխություն)
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)
- Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)

2024 թվականի հունվարի 1-ից գործող նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանությունները և փոփոխությունները  
Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

- Փոխանակել իրական բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)
- Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (\$ՀՄՍ 9-ի և \$ՀՄՍ 7-ի փոփոխություններ)
  - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՀՀՄՍ 9-ի ԼԼ \$ՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար.

- \$ՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում
- \$ՀՄՍ 19 Դուրստը ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

#### 4. Հիմնական միջոցներ

2023թ

Նկարագրություն

2023թ.

Ավելացում

Օտարում

2023թ.

	հ ու ն վ ա ղ ա ղ ի 31-ի դրությամբ	/նվազեցում/	դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Շենքեր, շինություններ</b>			
սկզբնական արժեք	1,051,807	1,039,015	12,792
Մաշվածություն	739,667	732,768	6,899
Հաշվեկշռային արժեք	312,140	306,247	5,893
<b>Տեխնիկական մեքենաներ և սարքավորումներ</b>			
սկզբնական արժեք	408,920	150,206	258,714
Մաշվածություն	355,768	122,897	230,871
Հաշվեկշռային արժեք	53,152	25,309	27,843
<b>Տրանսպորտային միջոցներ</b>			
Սկզբնական արժեք	298,583	65,992	232,591
Մաշվածություն	298,583	65,992	232,591
Հաշվեկշռային արժեք	0		0
<b>Արտադրական գ ու լ յ ք</b>			
Սկզբնական արժեք	136,999	112,966	24,033
Մաշվածություն	136,663	112,765	23,898
Հաշվեկշռային արժեք	336	201	135
<b>Հողամասեր</b>			
Հաշվեկշռային արժեք	679,139	676,952	2,187
Ընդամ. հիմն. միջոցներ	2,575,448	2,045,131	530,317
Մաշվածություն	1,530,681	1,036,422	494,259
<b>Հաշվեկշռային արժեք</b>	<b><u>1,044,767</u></b>	<b>1,008,709</b>	<b><u>36,058</u></b>

**2024թ**

Նկարագրություն	2024թ. հ ու ն վ ա ղ ա ղ ի 1-ի դրությամբ	Ավելացում	Օտարում /նվազեցում/	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Շենքեր, շինություններ</b>				
սկզբնական արժեք	12,792		12,792	0
Մաշվածություն	6,899		6899	0
Հաշվեկշռային արժեք	5,893		5893	0
<b>Տեխնիկական մեքենաներ և սարքավորումներ</b>				
սկզբնական արժեք	258,714	75,362	-	334,076
Մաշվածություն	230,871			230,871
Հաշվեկշռային արժեք	27,843	75,362		103,205
<b>Տրանսպորտային միջոցներ</b>				
Սկզբնական արժեք	232,591			232,591

Մաշվածություն	232,591			232,591
Հաշվեկշռային արժեք	0			0
<b>Արտադրական գույք</b>				
Սկզբնական արժեք	24,033			24,033
Մաշվածություն	23,898			23,898
Հաշվեկշռային արժեք	135			135
<b>Հողամասեր</b>				
Հաշվեկշռային արժեք	2,187	2,187		-
Ընդամ. հիմն. միջոցներ	530,317	75,362	14,979	590,700
Մաշվածություն	494,259		6,899	487,360
<b>Հաշվեկշռային արժեք</b>	<b><u>36,058</u></b>	<b>75,362</b>	<b>8,080</b>	<b><u>103,340</u></b>

Բացահայտում՝ Համաձայն Ընկերության խորհրդի նիստի 18. 04. 2023թ թիվ 2023/1 և Ընկերության 10. 05. 2023թ թիվ 2023/1 արտահերթ ժողովի արձանագրության ներքին Ընկերությանը հավանության է տվել օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքի գալի մասը:

Ընկերությանը անավարտ և տեղակայման ենթակա սարքավորումները և հիմնական միջոցները 2024 թ ավարտին որոշել է հաշվառել հիմնական միջոցների կազմում 75,362 հազ դրամ արժեքով: Հիմնական միջոցներ կազմի մեքենաներ և սարքավորումներ դասում առկա են 61,964.5 հազ, դրամի չափով արժեզրկված ակտիվներ:

**5. Անավարտ և տեղակայման ենթակա ոչ ընթացիկ ակտիվներ**

Հազար դրամ	<u>2024թ</u>	<u>2023թ</u>
Տեղակայման ենթակա սարքավորումներ	-	205,235
Անավարտ հիմնական միջոցներ	-	23,649
Ընդամենը	=	<b><u>228,884</u></b>

\*Բացայատում - 2024թ վերջում վերոհիշյալ դասի հիմնական միջոցները շարունակվել են հաշվառվել հիմնական միջոցների կազմում 75,362 հազ. դրամի չափով:

**6. Հետաձգված հարկային ակտիվներ**

Հազար դրամ	<u>2024</u>	<u>2023</u>
Պաշարների գծով արժեզրկումից կորուստներ	3,088	12,057
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	11,153	15,965
Ընդամենը	<b><u>14,241</u></b>	<b><u>28,022</u></b>

**7. Պաշարներ**

Հազար դրամ	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
Նյութեր	236,151	419,176
Վառելիք		
Տարա	-	-
Պահեստամասեր	-	7,582
Փոքրարժեք առարկաներ	-	52,959

Մետաղի ջարդոն	-	4,426
Անավարտ արտադրություն	2,943	36,593
Պատրաստի արտադրանք	38,624	38,623
Ապրանքներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>277,718</b>	<b>559,359</b>

\*Բաց այ ատու մ -

1/ Պաշարների կազմում առկա են արժեզրկված 17,153 հազ. դրամի ձեռք բերման արժեքով ակտիվներ:

2/ 2024թ. վերջում արագամաշ առարկաները, պահեստամասերը հաշվառվել են նյութերի կազմում:

### 8. Առևտրային դեբիտորական և այլ պարտքեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր շարունակվող գործառնություններ	1,425	57
Տրված առհաշիվ գումարներ	-	2,404
Առևտրային դեբիտորական պարտքեր ընդհատվող գործառնություններ	605,000	1,388,885
<b>Ընդամենը</b>	<b>606,425</b>	<b>1,391,346</b>

### 9. Տրված կարճաժամկետ փոխառություններ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Ավանդ բանկում	868,624	3,304,790
Ներդրումներ ընկերություններում	այլ 400,000	-
Հաշվեգրված տոկոսային եկամուտ	21,428	107,373
<b>Ընդամենը</b>	<b>1,290,052</b>	<b>3,412,163</b>

### 10. Դրամական միջոցներ և դրա համարժեքներ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Դրամարկդ	223	126
Ընթացիկ բանկային հաշիվներ ՀՀ դրամով	35,587	80,776
Ընթացիկ բանկային հաշիվներ արտարժույթ.	-	8,095
<b>Ընդամենը</b>	<b>35,810</b>	<b>88,997</b>

### 11. Մեկական կապիտալ

	<i>2024թ.</i>	<i>2023թ.</i>
<i>Հազար դրամ</i>		
Համալրված բաժնետրական կապիտալ	1,158,578	1,158,578
Կուտակված շահույթ	456,013	2,181,916
Պահուստային կապիտալ	-	339,702
Էմիսիոն եկամուտ	-	1,346,845
<b>Ընդամենը</b>	<b>1,614,591</b>	<b>5,027,041</b>

**12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

	<i>2024թ.</i>	<i>2023թ.</i>
<i>Հազար դրամ</i>		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	920	1,035
<b>Ընդամենը</b>	<b>920</b>	<b>1,035</b>

**13. Հարկերի գծով ընթացիկ պարտավորություններ**

	<i>2024թ.</i>	<i>2023թ.</i>
<i>Հազար դրամ</i>		
Եկամտային հարկ	1,761	762
Շահույթային թահարկ	12,365	709,587
ԱԱՀ	61	2,691
Սոցապահատկացումներ	22	27
Դրոշման իշխան վճար	90	92
Այլ հարկեր, տուրքեր	-	85
<b>Ընդամենը</b>	<b>14,299</b>	<b>713,244</b>

**14. Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների հատուցումների գծով**

	<i>2024թ.</i>	<i>2023թ.</i>
<i>Հազար դրամ</i>		
Ընթացիկ պարտք աշխատավարձի գծով	3,067	3,509
<b>Ընդամենը</b>	<b>3,067</b>	<b>3,509</b>

**15. Շարունակվող գործառնույթի ներդրումներ**

<i>Հասույթ / եկամուտ</i>	<i>2024թ.</i>	<i>2023թ.</i>
<i>հազար դրամ</i>		
<b>Շարունակվող գործառնույթի ներդրումներ</b>		
<i>Գործառնական գործունեությունից եկամուտներ</i>		
Պատրաստի արտադրանքի իրացումից հասույթ	-	1,000
Ծառայությունների մատուցումից հասույթ	2,000	-
Ապրանքների իրացումից հասույթ	-	-

Ընդամենը արտադրանքի, ապրանքերի իրացումից եկամուտներ	2,000	1,000
Գործառնական վարձակալությունից եկամուտ	1,876	6,607
Պաշարների օտարումից եկամուտ	-	41,735
Ընդամենը գործառնական գործունեությունից այլ եկամուտներ	1,876	48,342
<b>Ընդամենը Գործառնական գործունեությունից եկամուտներ</b>	<b><u>3,876</u></b>	<b><u>49,342</u></b>
<b>Շարունակվող գործունեության այլ եկամուտներ</b>		
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	-	35,573
Արտարժ. փոխարժեք. տարբերությունից եկամուտ	3,400	18,125
Այլ եկամուտներ	7,562	331
<b>Ընդամենը շարունակվող գործունեության այլ եկամուտներ</b>	<b><u>10,962</u></b>	<b><u>54,029</u></b>
<b>Ընդամենը շարունակվող գործունեության եկամուտներ</b>	<b><u>14,838</u></b>	<b><u>103,371</u></b>

**Ծախսեր/ Կորուստ**

**Շարունակվող գործառնական ծախսեր**

	2024թ	2023թ
Գործառնական գործունեությունից ծախսեր		
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	-	909
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	1,818	-
Վաճառված ապրանքների ինքնարժեք	-	-
<b>Ընդամենը արտադրանքի, ապրանքերի ինքնարժեք</b>	<b><u>1,818</u></b>	<b><u>909</u></b>

**Վարչական ծախսեր**

Աշխատավարձ և սոցալ հատկացումներ	42,411	44,247
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,002	1,081
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,571	1,012
Բանկային, ապահովագրության ծախսեր	188	74
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	1,037	2,344
Այլ վարչական ծախսեր	12,881	7,031
<b>Ընդամենը վարչական ծախսեր</b>	<b><u>59,090</u></b>	<b><u>55,789</u></b>

**Գործառնական այլ ծախսեր**

Պաշարների վաճառքներից ծախսեր	-	40,808
Ծախսեր տույժեր, տուգանքների գծով	11,432	-
Արտադրական ծախսումների նորմատիվային մակարդակը գերազանցումից ծախսեր	12,671	14,139
Խեղման նպաստ	23,770	23,901
Գործառնական այլ ծախսեր	2,405	-
<b>Ընդամենը գործառնական այլ ծախսեր</b>	<b><u>50,278</u></b>	<b><u>78,848</u></b>

**Շարունակվող գործունեության այլ ծախսերի հանրագույն մար**

Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	-	-
Անհատույց տրված ակտիվներ	-	-

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ	18,847	860
<b>Ընդամենը շարունակվող գործունեության այլ ծախսեր</b>	<b><u>18,847</u></b>	<b><u>860</u></b>
Շարունակվող գործունեության շահութահարկի գծով ծախս	0	0
Ընդամենը շարունակվող գործունեության ծախսեր	130,033	136,406
<b>Շարունակվող գործունեության հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս</b>	<b>(115,195)</b>	<b>(33,035)</b>

**16. Ընդհատվող գործառնություններ**

**Հասույթ / Եկամուտ**

<i>հազար դրամ</i>	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	88,942	5,110,065
Պաշարների օտարումից եկամուտ	261,722	-
Փոխառությունների տրամադրումից տոկոսային եկամուտ	128,010	107,373
<b>Ընդամենը ընդհատվող գործունեության եկամուտներ</b>	<b><u>478,674</u></b>	<b><u>5,217,438</u></b>

**Ծախսեր / Կորուստ**

	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	161,602	1,008,708
Պաշարների օտարումից ծախսեր	281,642	-
<b>Ընդամենը ընդհատվող գործունեության ծախսեր</b>	<b><u>443,244</u></b>	<b><u>1,008,708</u></b>
Շահույթ նախկին հարկումը	35,430	4,208,730
Ընդհատվող գործունեության շահութահարկի գծով ծախս	(18,903)	(709,587)
Ընդհատվող գործունեության հետաձգված հարկի գծով ծախս /եկամուտ/	(13,781)	(42,826)
Ընդհատվող գործունեության գույքի արժեքի	2,746	3,499,143
<b>Ընկերության ընդհանուր գույքի արժեքի</b>	<b>(112,449)</b>	<b>3,423,282</b>

**17. Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով**

*Ընկերությունը որպես վարձատու*

Ընկերությունը չ ու նի վարձակալությամբ տրված տարածքներ և գույք:

**18. Ֆինանսական ռիսկի կառավարում**

Ֆինանսական գործիքների օգտագործմամբ ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին՝

- պարտքային
- լիկվիդայնության
- շուկայական(գնի)

Այս բացահայտումը արտահայտում է յուրաքանչյուր ռիսկի ազդեցությունը, ընկերության քաղաքականությունը և գործունեությունը ռիսկը չափելու և կառավարելու և վերահսկելու համար, որի համար ընկերության ղեկավարությունը ամբողջովին պատասխանատու է: Իր սովորական գործունեության ընթացքում ընկերությունը ենթարկվում է պարտքային, փոխարժեքային, շուկայական ռիսկերին, ուստի դրանց ազդեցությունը չպետք է հեջավորվի:

**Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստի ռիսկն է, երբ ֆինանսական գործարքի մյուս կողմը հրաժարվում է կատարել պայմանագրային պարտավորությունները: Ընկերությունը ցուցաբերում է յուրահաստուկ մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին, գործարքի կողմին: Մասնավորապես հաշվի է առնվում վիճակագրական, արդյունաբերական տվյալներ, որոնք նվազեցնում են այդ ռիսկը: Ընկերությունը պահուստներ չի ձևավորում, և ընթացիկ տարվա արդյունքներով անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն ճանաչվել և դուրս գրվել ֆինանսական արդյունքներում:

**Լիկվիդայնության ռիսկ**

Դա ընկերության ֆինանսական պարտավորությունների կատարման անկարողությունն է երբ այն անհրաժեշտ է մարել: Ընկերությունը կառավարում է լիկվիդայնությունը, համոզված լինելով, որ միշտ ունի համապատասխան լիկվիդային ակտիվներ, որպեսզի մարի առաջացող հնարավոր պարտավորությունները ծայրահեղ և սովորական իրավիճակներում, առանց անթույլատրելի կորուստների կամ ռիսկային վնասների:

հազ. դրամ

Պարտավորություններ		Իրացվելի ակտիվներ	
Երկարաժամ. փոխառություններ	-	Դրամական միջոցներ	35,810
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	920	Այլ ընթացիկ ակտիվներ	-
Ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով	14,299	Առևտրային դեբիտորական պարտքեր	606,425
Այլ ընթացիկ պարտավորություն.	-	Պաշարներ	277,718
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների հատուցումների գծով	3,067	Կարճ աժամկետ փոխառություններ	1,290,052
Ընթացիկ պարտավորություններ	694,709	Այլ ընթացիկ ակտիվներ	-
Ընդամենը	<b>712,995</b>	Ընթացիկ հարկային ակտիվներ	-
			<b>2,210,005</b>

**Շուկայական(զնի) ռիսկ**

Իր մեջ ներառում է փոխարժեքային տարբերությունը, տոկոսները և կապիտալի գնային փոփոխությունները: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է վերահսկել շուկայի ազդեցությունը ընդունելի չափանիշների միջև, օպտիմալացնելով մարումները: ընկերությունը չի հեջավորում շուկայական ռիսկը:

ա) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը իրականացնում է որոշ գործարքներ արտարժույթով: Հետևաբար, այն ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ղեկավարությունը չի հեջավորում Ընկերության ենթարկումը արտարժույթային ռիսկին:

Փոխարժեքները ըստ տարիների

	առ. 31.12.2024	առ. 31.12.2023	առ. 31.12.2022
USD	396.56	404.79	393.57
RUB	3.71	4.50	5.59

բ) Տոկոսների փոփոխության ռիսկ

Տոկոսային փոփոխությունները գլխավորապես ազդում են դեբիտորական եվ կրեդիտորական պարտքերի վրա, փոփոխելով դրանց ընթացիկ արժեքը: Տնօրինությունը չունի ֆորմալ դրույթներ, որոշելու թե ինչ ազդեցություն կունենա այս տատանվող ռիսկը ընկերության վրա:

գ) Գործառնական ռիսկ

Ընթացիկ տարին համեմեմատելով 2023թ ֆինանսական տարվա հետ ընկերության համախառն եկամուտի ծավալները և վազել են հիմնական միջոցների վաճառքի գծով:

**19. Լրացուցիչ, չնախատեսված հանգամանքներ**

*Ապահովագրություն*

Ապահովագրությունը Հայաստանում զարգացման փուլում է և համաշխարհային ապահովագրական տարբեր ձևեր դեռևս մատչելի չեն ՀՀ-ում: Ընկերությունը չունի լրիվ ապահովված ապահովագրություն գույքի, սարքավորումների, առևտրի ընդհատման, շրջակա միջավայրի ազդեցության, պատահարների և այլ տիպի ապահովագրություններ:

*Հարկային քաղաքականություն*

Հարկերը ենթարկվում են շարունակական ստուգման և վերահսկման հարկային տեսուչների կողմից, որոնք լիազորված են առաջադրել հարկային տույժեր և տուգանքներ: Այս հանգամանքները ստեղծում են հարկային ռիսկեր, որոնք ավելի նշանակալի են ՀՀ-ում քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և, եթե այդ մեկնաբանությունները կիրառվեն, ապա հետևանքները կարող են էական ազդեցություն ունենալ այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

**20. Դատական պրոցեսներ**

Ընկերությունը հայտարարում է, որ 2024 թվականի ընթացքում հանդես չի եկել որպես հայցվոր կամ պատասխանող ՀՀ դատարաններում:

**21. Գործարքներ կապակցված կողմերի միջև**

Յայ Էլ Եկտրամեքենա ԲԲԸ կապակցված կողմեր են հանդիսանում ընկերության բաժնետերերը, խորհրդի անդամները: Մասնավորապես խոշոր բաժնետեր է Գ. Մաթևոսյանը որին պատկանում է ընկերության բաժնետոմսերի 75.18%-ը կամ 8,710,039 հատ բաժնետոմս:

Ընկերության խորհրդի անդամները 8 անձիք են, որից 5-ը հանդիսանում են ընկերության աշխատակիցներ և 3-ը հանդիսանում են ֆիզիկական անձիք որոնք աշխատում են հասարակական հիմունքներով: 2024թ. ընթացքում ընկերության և կապակցված անձանց հետ իրականացված գործարքները հետևյալն են՝

Կապակցված ընկերություն և հանդիսանում <Էլ Եկտրամեքենա ինժեներինգ> ՓԲԸ-ն, որի հետ 2024թ ընթացքում կատարվել են վաճառքի գործարքներ ընդամենը 324429,8 հազ. դրամի չափով:

**22. Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ**

Ընկերության գլխավոր տնօրենը և աշխատակազմի ղեկավարը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացել են հետևյալ վարձատրությունը, որը ներառվում է “Աշխատավարձ և աշխատակիցներին հատուցումներ” հոդվածում:

Ընկերության գլխավոր տնօրենը ստացել է հետևյալ վարձատրությունը՝  
հազար դրամ

2024թ	2023թ
3,914	3,865

Աշխատակազմի ղեկավարը ստացել է հետևյալ

վարձատրությունը՝  
հազար դրամ

2024թ.

2023թ.

1,893

1,855

**23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր**

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից /31. 12. 2024թ./ հետո մինչև վավերացման ամսաթիվը /18. 04. 2025թ./ ընկած ժամանակահատվածում:

